

PEARLS OF ARMENIAN HERITAGE

Մովսէս Կաղանկատուացի (շուրջ 1000 թուական)

Մովսէսի անունով մեզի հասած է Աղուաններու Պատմութիւնը: Այս գրութիւնը հաւաքածոյ մըն է, գործը՝ տարբեր խմբագիրներու: Գիրքը կը բաղկանայ երեք մասերէ. Առաջինը կազմուած է 30 գլուխներէ, ուր կը ներկայացուի Աղուաններու ազգաբանութիւնը, Ադամէ սկսեալ մինչեւ 450 թուականը, խառն քաղաքական եւ եկեղեցական պատմուածքներով: Երկրորդ մասը կազմուած է 52 գլուխներէ, ամփոփելով 450էն 640 տարիներու շրջանը: Իսկ Երրորդ մասը կը բաղկանայ 23 գլուխներէ, եւ կը հասնի մինչեւ 915 թուականը: Վերջին երկու գլուխները ցանկեր են աղուան թագաւորներուն եւ հայրապետներուն:

Դիւրին չէ սահմանել թէ երբ գրուած են իւրաքանչիւր մասերը: Մասերը կը տարբերին իրարմէ լեզուով, ոճով, եւ պատմելու եղանակով: Դէպքերը յաջորդութիւն չեն կազմեր, այլ անջատ դրուագներ են, առանց ուղիղ ժամանակագրութեան եւ տարիներու յիշատակութեան: Քաղաքական իրադարձութիւններուն չափ տեղ կը տրուի եկեղեցական եւ դասաւարտական խնդիրներու եւ գրութիւններու, հրաշքներու եւ մասունքներու գիտերու հրաշապատում դէպքերու: Խմբագիրը կ'ըսէ որ վիպասանաբար գրել կը սիրէ:

Վաչագան թագաւորին, շուրջ 500 թուականին, ժամանակ պատմողը առաջին դէմքով երբեմն կ'արտայայտուի, ինչ որ մտածել կու տայ որ այս հատուածները առնուած պէտք են ըլլալ ականատեսի մը աղբիւրէն: Նոյնպէս՝ Վիրոյ կաթողիկոսին եւ մանաւանդ Ջուանշիրի վերաբերեալ անցուդարձերը ունին առաջին դէմքով հատուածներ. բայց յայտնի է որ նոյն անձը չի կրնար ըլլալ պատմիչը, հարիւրաւոր տարիներու հեռաւորութեան հետեւանքով:

Գիրքին պատմական արժէքը կը կայանայ հոներու եւ աղուաններու մասին, ինչպէս նաեւ՝ այդ դարերուն եկեղեցական խնդիրներուն մասին տուած տեղեկութիւններուն մէջ: Ջուանշիրի մահուան ողբը յօրինուած է “արիեստական գիտութիւններուն հմուտ” Դաւթակ Ճարտասան անուն անձէ մը, որ կը սկսի “*աստուածային Բանին արուեստաւոր հոգի*”-ին ուղերձով, եւ այբբենական քառատող տուններէ կը բաղկանայ:

Այս խմբագրութեան ծանօթ չեն մեր պատմագիրներէն շատեր: Առաջին անգամ Մխիթար Գոշ (12րդ դար) կը յիշէ Աղուաններու բովանդակ պատմութիւն մը, բայց հեղինակ/խմբագիր կը ճանչնայ ոմն Մովսէս Դասխուրանցի: 13-րդ դարուն՝ Մխիթար Անեցի եւ Մխիթար Այրիվանեցի կը ճանչնան *Աղուանից Պատմութիւն* մը, բայց առանց հեղինակի: Ուտի գաւառին Կաղանկատուք գիւղը յիշած ատեն, գրողը կը յայտնէ որ ինք այդ գիւղէն է, բայց իր անունը չի տար: Կարելի է մտածել, որ Կաղանկատուացին ըլլայ մասերէն մէկուն գրիչը, իսկ Մովսէս Դասխուրանցին՝ խմբագրիչը, կազմելով ամբողջութիւնը 1000 թուականին ատենները:

(Քաղուած Հ. Կիրեղ Վրդ. Քիպարեանի “Պատմութիւն Հայ Գրականութեան” հատորէն)

